Արձանագրություն N 3

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար շերտավարագույրի ձեռքբերման նպատակով
կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/36 ծածկագրով գնման ընթացակարգի
/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

22.08. 2023թ.
ժամը՝ 14.30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Լ. Լևոնյան
Հանձնաժողովի անդամներ՝	Թ. Դավթյան, Վ. Քեռյան*, Ա. Լալայան**, Ա. Խուդինյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ռ. Հովհաննիսյան

**Նիստին բացակայում էր հանձնաժողովի անդամ Վ. Քեռյանը*

*** Հանձնաժողովի անդամ՝ Ա. Լալայանին փոխարինելու է Է. Մնացակյանը*

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)
1	շերտավարագույր	276250

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 21.08.2023թ.-ին ժամը 14:30-ին:

էլեկտրոնային աճուրդը կայացավ հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 22.08.2023թ. ժամը 14:30-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների փվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	«ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ	ք. Երևան, Գալշոյան 15/2	/+374/41230222	sddgroup2000.tender@gmail.com

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. *Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

6. Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակիցների կարգավիճակը
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«ՍՏԱՐՄԱԼԵ« ՍՊԸ	230208.33	20 %	276249.99	230208.33	20 %	276249.99	

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

23.08.2023թ. ժամը 10:30-ին կայացած նիստում Հանձնաժողովն ուսումնասիրելով «ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Մասնակից/ կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթերը, ինչպես նաև eauction.armeps.am համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, արձանագրեց հետևյալը՝

Մասնակցի կողմից տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ, թե մատակարարվելու է հատուկ մշակված կտորից, թե պոլիմերային նյութից շերտավարագույր: Ուստի առաջարկում ենք տեխնիկական բնութագրում հստակ նշել մատակարարվող ապրանքը լինելու է հատուկ մշակված կտորից, թե պոլիմերային նյութից: Բացի այդ Մասնակցին առաջարկում ենք հստակ նշել ապրանքային նշանը և մոդելը, իսկ դրանք առկա չլինելու դեպքում՝ չնշել:

Միաժամանակ առաջարկվում է, որ տեխնիկական բնութագրի ձևակերպումը Մասնակիցը ներկայացնի իր անունից:

Հիմք ընդունելով վերոգրյալը, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետով, Հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել՝ առաջարկելով Ընթացակարգի Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 25.08.2023թ. ժամը 10:30-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. Տեղեկություն՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 25.08.2023թ. ժամը 10:30-ին: Հանձնաժողովի կազմավորման հրամանում կատարվել է հանձնաժողովի անդամի փոփոխություն, մասնավորապես ինչով պայմանավորված Հանձնաժողովի նախագան նիստը տեղափոխվեց 28.08.2023թ. ժամը 14.30-ին:

Հանձնաժողովի անդամ Ա. Լալայանին փոխարինելու է Է. Մնացականյանը:

Հանձնաժողովը կայացած նիստում արձանագրեց, որ «ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները և համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ղեկավարվելով Կարգի 26-րդ կետի 4-րդ ենթակետով և 42-րդ կետով՝ Հանձնաժողովը որոշեց «ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրերի կնքման վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

10.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Լ. Լևոնյան

անդամներ՝ _____ Թ. Դավթյան

_____ Է. Մնացականյան

_____ Ա. Խուդինյան

քարտուղար՝ _____ Ռ. Հովհաննիսյան